

Ս. ԾՆՈՒՆԴ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ



**«Ահա կոյս յղացի եւ ծնցի որդի, եւ կոչեսցեն զանուն Նորա
Էմմանուէլ, որ թարգմանի՝ ընդ մեզ Աստուած» (Մատթ. Ա. 23),
«Աստուածաշունչ Հնոց եւ Նորոց Կտակարանաց», էջ 433**

ՄԻՄԵՆՆ ԾԵՐՈՒՆԻ Ի ԳԻՐԿՍ ԱՌԵԱԼ ՄԱՆՈՒԿ ՅԻՍՈՒՍ



**«Արդ արձակես զծառայս քո Տէր ըստ բանի քում ի խաղաղութիւն, զի տեսին
աչք իմ զփրկութիւն քո՝ զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց»**
(Դուկ. Բ. 29-30), «Աստուածաշունչ Հնոց եւ Նորոց Կտակարանաց», էջ 503

ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ

պապրմանական գիրք. դոկտոր, ՄՄ

**ՄԵՍՐՈՊ ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆԻ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԳՐՈՅ
ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ» ԳԻՐԲԸ ԵՒ ՆՐԱ ՄԷՋ
ՆԿԱՐԱԳՐՈՒԱԾ-ՅԻՇԱՏԱԿՈՒԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԸ**



Եսրոպ Մագիստրոս արք. Տէր-Մովսիսեանի այս գիրքը՝ հայերէն Աստուածաշնչի ձեռագրական աւանդութի առաջին լուրջ գիտական հետազոտութիւնն է, որ արուած է ԺԹ. դարավերջի գրութեամբ հեղինակին յայտնի նիւթի հիման վրայ, նաեւ իր հրապարակման ժամանակի հայագիտութեան եւ հայ աստուածաշնչագիտութեան կարեւոր առաջընթաց քայլերից կամ ձեռքբերումներից մէկն է, ըստ այդմ՝ գնահատուել ու գործածուել է թէ՛ հեղինակի ժամանակակիցները¹ եւ թէ՛ աւելի նոր աշխատութիւնների մէջ: Աւելին, հեղինակը ձեռագրերի արտաքին տուեալներով (տփի կազմութիւն՝ պարունակած նիւթերի միատեղ հանդէս գալը եւ որոշակի կարգով միմեանց հերթագայելը, բնագրական խնդիրներին վերաբերող յիշատակագրութիւններ, մատենագիտական ցուցում-մատնանշումներ եւ նմանիք) Աստուածաշնչի հայերէն ձեռագրերը զատորոշել է չորս խմբի. ձեռագրական համեմատութիւնների բաւական հարուստ նիւթի արդիւնք-ընթերցումների

¹ Տե՛ս Մ. Թեր-Մовсесянъ, Исторія перевода Библии на армянскій языкъ, С. Петербургъ, Пушкинская скоропечатная, Летушковъ пер., N 4, 1902, IX, 287 էջ. վերնագրի վերի հայերէն ձեւը հեղինակինն է եւ առկայ է բուն գրքի երկրորդ տիտղոսաթերթի վրայ, այլեւ՝ իր «Ընդհանուր ցուցակ հայերէն ձեռագրաց» անտիպ գործի մէջ այս գիրքը բազմիցս յիշատակուած է յօդուածիս վերնագրում եղած ձեռով կամ նրա բառերի սկզբնատառերի համադրումով՝ «ՊՄԳԹ», որ մենք եւս գործածում ենք այստեղ:

² Տե՛ս Ն. Սառի գրախօսութիւնը՝ «Критики и мелкие статьи: Тексты и разыскания по армяно-грузинской филологии», вып. V, С. Петербург, 1903, էջ 29-53: Չորս այլ գրախօսութեան թուարկում տե՛ս Գ. Տէր-Վարդանեան, Մեսրոպ Մագիստրոս արքեպիսկոպոս Տէր-Մովսիսեան. Կենսագործունէութիւնը, «Ընդհանուր ցուցակ հայերէն ձեռագրաց», Մատենագիտութիւն, Երևան, 1999, էջ 152:

խմբավորումներով վերջերս հաստատուել է այդ դասակարգման հիմնա-
նորածությունն ու ճշգրտությունը³:

Գրքի տարողությունն էլ գիտական արժեքի մասին լավագույնս վկա-
յում է նրա գլխացանկը (էջ Է.-Թ.), որ, մեր ներկայ խնդրի համեմատ,
նաեւ՝ հետագայ շարադրանքում մէջընդմէջ անհարկի բացատրություն-
ներից խուսափելու համար, տեղին ենք համարում հայերէնով, գրքի էջա-
համարներով հանդերձ, ամբողջությունմբ բերել այստեղ.

* * *

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ - էջ Գ.-Զ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ - էջ Է.-Թ.

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ. ա. Թարգմանությունն պատմության համառօտ ակ-
նարկ. Աղբիւրները - 1-5. Այբուբենի գիւտը եւ Աստուածաշնչի թարգ-
մանությունը - 5-14. Ենթադրությունն աւելի հին թարգմանության մասին
- 14-27.

բ. ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ ԵՒ ՆՐԱ ՄԱՍԵՐԻ ՀՐԱՏԱ-
ՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ. Ազարիա կաթողիկոսի փորձերը - 28, 29. Ոսկան Երե-
ւանցու, Մխիթարի, Պետրոս Լատինացու հրատարակությունները - 29-34.
Զօհրապի, վենետիկեան, Աստուածաշնչական ընկերության Սանկտ Պե-
տերբուրգի եւ Կոստանդնուպոլսի հրատարակությունները - 34-40. Հին եւ
Նոր կտակարանների մասերի հրատարակություններ - 40-51.

գ. ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայ մասնագէտնե-
րի՝ Զարպհանալեանի, Հ. Սուքրիի, Ն. Բիւզանդացու եւ ուրիշների եր-
կերը - 52-60. Եւրոպացի մասնագէտներ Lourdetի, de Wetteի, Hyvernathի,
Conybeareի, Robinsonի, Zahnի, Ermoniի, Vetterի եւ ուրիշների գործերը
- 60-75.

1. ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԵՐԸ. Հայերէն ձեռագրեր
ունեցող մատենադարանների մասին - 76-81. Նկարագրությունն ամբող-
ջական Աստուածաշնչի 79 [=77] ձեռագիր օրինակությունների - 81-151.

2. ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ ՄԱՍՆԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԵՐ ԵՒ ԱԿՏԱՐԱՆՆԵՐ.
ա. Մասունք Հին եւ Նոր կտակարանների՝ 18 ձեռագիր - 152-154, բ. Հին

³ Հմմտ. Հ. Մ. Ամալեան, Ձեռագրերի դասակարգման փորձ ըստ Մակաբայեցոց գրքերի,
ՊԲՀ, ՀՊ 4, 1979, էջ 59-71: Աստուածաշնչի առանձին գրքերի համեմատական հրատա-
րակությունների մէջ եւս հաստատուել է նոյն չորս խմբի առկայությունը:

կտակարանի որոշակի գրքեր ունեցող ձեռագրեր՝ 21 միաւոր - 155-158. գ. Աւետարանի ձեռագրեր՝ 38 [=36] միաւոր - 156-167. դ. Նոր կտակարանի գրքեր ունեցող ձեռագրեր՝ 20 միաւոր - 167-169. ե. Նոր ձեռագրեր՝ 4 միաւոր - 169, 170. զ. Աստուածաշնչի գրքերը Ժողովածուների մէջ [20 միաւոր] - 170, 171.

3. ԶԵՌԱԳՐԵՐԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ. նրանց տեղաբաշխումն ըստ ժամանակի, գրչութեան տեսակի եւ վայրի - 171-180. Նրանց դասակարգումն ըստ հինգ խմբի - 180-185.

4. ԱՍՏՈՒԱԾԱՇՆՁԻ ՈՐ ԳՐՔԵՐՆ ԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԵԼ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԱՐՈՒՄ. Եկեղեցական Տօնացոյցների եւ Յայսմաւուրքների մասին - 185-189. Հինգերորդ դարի հեղինակների՝ աստուածաշնչական գրքերի վկայակոչումները - 189-192. Գրքեր, որոնց վկայակոչումներ չկան - 192, 193. Առ Կորնթացիս Բ. թուղթը - 193-195. Յայտնութեան թարգմանութեան հարցը - 195-198.

5. ՏԱՐՔԵՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԳՐՔԵՐ ԵՒ ԱՆԿԱՆՈՒՆԵՐ.

Ա. Ընդհանուր - 199, 200. ա. Աւետարան ըստ Մարկոսի՝ ԺԶ. տունք 9-20 - 200-203. բ. Աւետարան ըստ Ղուկայ՝ ԻԲ. տունք 43-44, 51-203, 204. Ղուկասու Աւետարանի վերջի աւելորդ տները - 204, 205. Յովհաննու Ե. 4 տունք - 205. Իրք կնոջն շնացելոյ հատուածը - 206-210.

Բ. ա. Երկրորդ տարբերակներ՝ ա. Մնացորդաց գրքերի - 210, բ. Սողոմոնի իմաստութեան գրքի - 210, 211, գ. Եզրի Գ. եւ Դ. գրքերի - 211-213.

Գ. Անկանոններ. Հանգիստ Յովհաննու - 213. ա-գ. Մահք երկոտասան աւագ մարգարէից, Հատուած Մնացորդաց, Ենովքի անկանոն - 214. դ. Կտակք երկոտասան մարգարէից - 214, 215, ե. Պատմութիւն Յովսէփայ եւ Ասանեթայ - 215, 216. զ. Աղօթք Մանասէի արքայի - 216. է. Դանիէլի եօթերորդ տեսիլը - 216, 217. ը. Մահք մարգարէից - 217.

Դ. ա. Պատմութիւն Յովսէփայ եօթն վահանգի. բ. Գալուստն Յակոբու ի Գեսեմ, գ. Անուանք դատաւորաց Իսրայելացւոց, դ. Խօսք Սիրաքայ՝ որդւոյ Սիմէոնի, ե. Քանիցս խօսեցաւ Տէր ընդ մարդկան - 217-218. Կիլիկեան Վուլգատայի հարցը - 218-223.

6. ԱՍՏՈՒԱԾԱՇՆՁԻ ԿԱՆՈՆԸ. ընդհանուր - 224.

ա. Կորինի կանոնը - 225.

բ. Գրիգոր Եպիսկոպոսի կանոնը - 225, 238.

Առաքելական թղթերի նախադրութիւնների հայերէն բնագիրը - 233-237.

գ. Մխիթար Այրիվանեցին. նրա աշխատութիւնները. ընդհանուր - 238-240. Եբրայական անկանոնների ցանկը - 241. Կղեմէսի, Եւագրի, Կիւրեղի ցանկերը - 242-251.

դ. Սամուէլ Անեցու՝ Անկանոնների ցանկը - 251, 252.

ե. Եկեղեցական կարգաց կանոնը եւ ձեռագրերը. ա. 435 եպիսկոպոսների ժողովի կանոնը - 252, 255, բ. Անտիոքի Բ. ժողովի կանոնը - 255, 256, գ. Կանոն հետեւողաց առաքելոց - 256, 257, դ. Պարտաւի ժողովի կանոնը - 257-259. ե. Օ² ձեռագրի ցանկը - 259. զ. Վասն համարոյ Հին եւ Նոր կտակարանաց - 259-260. է. Գրիգոր Տաթեւացու ցանկը - 260-263, ը. Յանկ-ծագումնաբանական ծառ - 263-264. թ. Առաքել եպիսկոպոս Սիւնեցու չափածոյ ցանկը եւ նրա բնագիրը - 264-266.

7. Բնագրի բաժանումները, նախադրութիւններ եւ գլխացանկեր.

Ա. ա. Համաձայնութեան կանոններ - 266, 267. բ. Համաձայնութիւն - 267. գ. Եւթաղ - 267, 268.

Բ. ա. Նախադրութիւններ եւ գլխացանկեր - 268-270. Նրանց հեղինակը Գէորգ Սկեւռացին է - 270-273. բ. Հերոնիմոսի Նախադրութիւնը - 273, 274. գ-ե. Նախադրութիւններ՝ Աթանասի, Եպիփանի, Դաւիթ Փիլիսոփայի (Սաղմոսաց), Յուլիանոս Աղեքսանդրացու եւ Սամուէլ վանականի (Յոբի), Լամբրոնացու, Մխիթար Գօշի, Վարդանի, Եսայու (մարգարէից), Եփրեմ Ասորու (Կորնթացւոց Գ.) - 275, 276. զ. Գէորգ Սկեւռացու չափածոները - 276. է. Ներսէս Շնորհալու եւ Ներսէս Լամբրոնացու չափածոները - 277.

Գ. Աստուածաշնչի բառացանկեր. ա. Վանականի, բ. Դաւթի եւ Ղազար Բաբերդացու - 277, 278.

Դ. Տնատում եւ այլ բաժանումներ՝ ա. Նոր Կտակարանի, բ. Հին Կտակարանի - 278-281.

ԼՐԱՅՈՒՄ - 282, 283.

Յանկ յատուկ անունների - 284-287:

* * *

Հայերէն Աստուածաշնչին վերաբերող գիտութիւնը կամ հայկական աստուածաշնչագիտութիւնը մշտապէս եղել է թէ՛ հայագիտութեան եւ թէ՛ ընդհանուր աստուածաշնչագիտութեան մասը, այսինքն՝ համաշխար-

Հային գիտութեան հետաքրքրութեան նիւթ կամ առարկայ: Սակայն մեր խնդրոյ առարկայ գիրքը միշտ անմատչելի է մնացել ուսներէն չիմացող Հայ եւ այլազգի Հայագէտներին ու աստուածաշնչագէտներին: Միայն մի օրինակ. վերջին շրջանում հրատարակուած եւ իբր Հայ աստուածաշնչագիտութեան պատմութիւն լինելու յաւակնող (իրականում՝ սոսկ այդ նիւթի ակնարկ) մի շարադրանքում, անհարկի կրկնելով հանդերձ Աստուածաշնչի Հայկական կանոնի վերաբերմամբ Մագիստրոսի հետազօտութեան մէջ եղածը, կանոնին վերաբերող աղբիւրների քաղումների վերջում նրա աշխատութիւնը վկայակոչուել է հետեւեալ տեսքով. «Գալուստ Տէր-Մկրտչեան, Պատմութիւն Ս. Գրոց Հայկական թարգմանութեան (Ռուսերէն), Մոսկուա, 1902, էջ 259-260»⁴: Մի յղման մէջ երեք սխալի (հեղինակի անունը պէտք է լինէր Մեսրոպ Տէր-Մովսիսեան, հրատարակութեան տեղը՝ Ս. Պետերբուրգ, էջահամարները՝ 259-262) առկայութիւնը վկայում է, որ սրանք սոսկ վրիպակներ չեն, այլ Մագիստրոսի վաստակն անտեսուած է կարգացած կամ հասկացած չլինելու պատճառով:

Քանի որ Հայագիտութեան հիմնական լեզուն Հայերէնն է, եւ Հայերէն Աստուածաշնչի որեւէ հարց քննող ու որեւէ ազգի պատկանող մասնագէտն անպայման պէտք է հին կամ նոր Հայերէն իմանայ, ուստի, ներկայացուածի բնոյթի գիտական զանցառութիւն-թիւրիմացութիւնները կանխելու լաւագոյն եղանակը Մեսրոպ Մագիստրոսի այս գործը Հայերէնով հրատարակելն է: Այս ուղղութեամբ զգալի աշխատանք արդէն արուած է. գրքի թարգմանութիւնն աւարտուած է, սկսել ենք խմբագրումն ու անհրաժեշտ պարզաբանում-ծանօթագրութիւնների շարադրումը⁵:

Մագիստրոսի ուսումնասիրութիւնը հիմնուած է իր հանրայայտ «Ընդհանուր ցուցակ Հայերէն ձեռագրաց» մեծածաւալ անտիպ գործի⁶ «Աստուածաշունչ մատեան» մասում նկարագրուած ձեռագրերի տուեալների վրայ⁷. հիմնականը էջմիածնի հաւաքածուների ձեռագրերի

⁴ Տե՛ս «Յուցակ Աստուածաշունչ մատեանի հայերէն ձեռագիրներուն», [կազմ.՝ Օսնիկ Եգանեան], Ե. արք. Աճէմեան, Լիզպոն, 1992, էջ ԳԸ., ծ. 259. նոյնը կրկնուած նաեւ՝ Ե. արք. Աճէմեան, Հայերէն Աստուածաշունչը (հայագիտական ուսումնասիրութիւններ), Երեւան, 2006, էջ 186:

⁵ Գրքում չարծարծուած կամ հեղինակի ժամանակ դեռեւս անյայտ մնացած ամբողջական Աստուածաշունչ եւ նրա առանձին գրքեր պարունակող ձեռագրերի ցանկ կամ ցուցակ կազմելը գիտական այլ՝ կարեւոր խնդիր է, որի մասին՝ մէկ այլ առիթով:

⁶ Տե՛ս Գ. Տէր-Վարդանեան, Մեսրոպ Մագիստրոս արքեպիսկոպոս Տէր-Մովսիսեան. Կենսագործունէութիւնը, 180 էջ:

⁷ Ենթադրելի է, որ Ի. դարի սկզբին այս թղթապանակում կամ ընդհանրապէս իր ցուցակում ունէր վիայն գրքում արծարծուած ձեռագրերի նկարագրութիւնները, սակայն մինչեւ

նրւթն է, օժանդակը՝ մեծ մասամբ գիտական գրականութեան միջոցով, երբեմն նաեւ անհատների հաղորդած տեղեկութիւններով յայտնի՝ այլ հաւաքածոների ձեռագրերինը: Գրքի հրատարակումից յետոյ եղել են ձեռագրերի զգալի տեղաշարժեր, աւելին՝ ինքն իսկ Մեսրոպ Մազիստրոսը 1913 թ. փետրուարին միաւորել է իր գործի կարեւորագոյն հիմքը՝ Էջմիածնի ձեռագրական բոլոր հաւաքածոները⁸, սրանով իսկ սկզբնաւորելով ներկայիս Մաշտոցեան Մատենադարանի ձեռագրական հիմնական հաւաքածուի միասնական համարակալումը: Այս պատճառով նրա աշխատութեան գործածումն այսօր դժուարացել է, քանի որ օգտագործած եւ յիշատակած ձեռագրերի իր նշանակած համարներն այսօր մեծ մասամբ չեն գործում: Ուստի, ներկայ յօդուածով անում ենք գրքի հայերէնացման առաջին քայլը. նոյն գրքի բաժինների կարգով, աղիւսակների ձեւով պարզում ենք նրա օգտագործած եւ յիշատակած բոլոր ձեռագրերի ներկայ տեղերը եւ գոյքահամարները⁹: Բոլոր աղիւսակների առաջին սիւնակի բնորոշումն է «Հ^րը/կ»։ սրանց մէջ գրքում նկարագրուած եւ յիշատակուած ձեռագրերը նշանակուած են 1-196 կարգային համարներով¹⁰: Այս յօդուածով, բնականաբար, հեշտացնում ենք նաեւ գրքի ռուսերէն տարբերակի օգտագործումը. ընթերցողը դիւրութեամբ գտնելու է գրքում նկարագրուած ձեռագրերի ներկայ տեղերն ու համարները: Յընթացս մեր շարադրանքի, անհրաժեշտ պարզաբանումներից բացի, տողատակում գրքից թարգմանաբար արել ենք չակերտուած եւ «ծնթ. Մ. Տ-Մ.-ի» բնորոշումով քաղուածքներ:

Կեանքի վերջ շարունակուած նրա աշխատանքի շնորհիւ մեզ հասած տարբերակում կայ 430 ձեռագրի եւ 68 պատուիկ-պահպանակի նկարագրութիւն. տե՛ս անդ, էջ 111:

⁸ Տե՛ս Օ. Եգանեան, Մատենադարանի ձեռագրական հաւաքածուները. «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցեան Մատենադարանի», հ. Ա., կազմ.՝ Օ. Եգանեան, Ա. Ջէյթունեան, Փ. Անթաբեան, ներած.՝ Օ. Եգանեանի, խմբ.՝ Լ. Խաչիկեանի, Ա. Մնացականեանի, Երեւան, 1965, էջ 84 (այս եւ նոյնի՝ հ. Բ., Երեւան, 1970. այսուհետեւ՝ ՅՁՄՄ, Ա. եւ Բ.):

⁹ Անշուշտ, այս առումով շատ օգտակար են Օ. Եգանեանի կազմած՝ Էջմիածնական հաւաքածուների ձեռագրերի հին եւ նոր համարների գուգադիր աղիւսակները (տե՛ս ՅՁՄՄ, հ. Բ., սիւն 1485-1532), բայց Մագիստրոսի գրքում գործածուած ձեռագրերի պատկերը պարզելու համար սրանք բաւարար չեն:

¹⁰ Առաջին աղիւսակի համարները (1-79 ձեւով), Հ^ր № նշանի գուգորդումով, կան նաեւ գրքի շարադրանքում, միւսների 78-196 համարները մերն են: Հեղինակը տարբեր՝ հակասական տեղեկութիւններով աղբիւրներ օգտագործած լինելու պատճառով չորս ձեռագիր նկարագրել է երկուական անգամ. սրանց թէ՛ առաջին եւ թէ՛ երկրորդ յիշատակումներն ստացել են նոյնական՝ համապատասխանաբար՝ 19, 77, 119, 126 համարները. ապա՝ տարբեր գրքեր ներկայացնելու պատճառով եօթ ձեռագիր յիշատակել է երկուական, մէկն էլ՝ երեք անգամ, ուստի 177, 179, 180, 181, 183, 184, 191 համարները շարքում գրել ենք երկուական, իսկ 178 համարը երեք անգամ:

* * *

Առաջին հերթին նշենք, որ հրատարակչի անունով յայտնի՝ այսպէս կոչուած «Կարենեան» ցուցակը¹¹, նրա կազմող-հեղինակ Դանիէլ վարդապետ Շահնազարեանի անունով, Մագիստրոսն իր ամբողջ գործի մէջ հետեւողաբար եւ իրաւացիօրէն կոչել է «Դանիէլի ցուցակ», որ մեր շարադրանքում նոյնութեամբ պահել ենք: Մի փոքր ծաւալուն քաղուածքով (բերելով նաեւ հեղինակի ծանօթագրութիւնները) տեսնենք, թէ Մ. Տէր-Մովսիսեանն ինչպէս է ներկայացրել «Դանիէլի» ցուցակում առկայ՝ իր խնդրին վերաբերող նիւթը. «Ըստ ձեռագրացուցակի՝ 2383 (իմա՝ Դանիէլի 2343) միաւորներից Աստուածաշնչի ամբողջական ձեռագրերը¹² են Հ^{մբ} 153-185 (Դանիէլ 147-178), Աստուածաշնչի թերի ձեռագրեր՝ Հ^{մբ} 186-228 (Դանիէլ՝ 179-221). Աւետարանի ձեռագրեր՝ Հ^{մբ} 229-371 (Դանիէլ՝ 222-363): Այս համարներից դուրս Աստուածաշնչի մասեր հանդիպում են՝ Հ^{մբ} 18, 21, 42, 420, 571, 602, 613, 615, 632, 729, 796, 944, 1187, 1228, 1345, 1348, 1359, 1430, 1472, 1684, 1708, 1767 (ես բերում եմ նոր՝ իրական համարները, եւ ո՛չ Դանիէլինը), բոլորը միասին՝ 241 ձեռագիր: Ձեռագրերի նոր հաւաքածուից Սուրբ Գրքի մասերին վերաբերում են. Աստուածաշնչի ամբողջական ձեռագրեր՝ Հ^{մբ} 16, 17, 18, 357, 358, 359. Աստուածաշնչի մասնական ձեռագրեր՝ Հ^{մբ} 35, 130, 144, 342, 533, 712, 806, 944, 1020, 1056. Աւետարանի ձեռագրեր՝ Հ^{մբ} 21-34, 362-385, 585-790, 802, 812, 816, 837, 852, 893-910, 923, 925-935, 963, 968, 973, 1000, 1006, 1007, 1019, 1024, 1028, 1046, 1057. Ընդամենը՝ 108, իսկ առաջինների հետ միասին՝ 349 միաւոր¹³: Նոր հաւաքածուի համարներն առաջինից

¹¹ «Մայր ցուցակ ձեռագիր մատենից գրադարանի Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի. Տպագրեալ հրամանաւ տեառն Մատթէոսի ընդհանրական հայրապետին ամենայն Հայոց, ծախսօք ի Կարնոյ գաղթական Յակոբայ վարժապետի Կարենեանց, յօգուտ դպրոցի Ժառանգատրաց Սրբոյ Էջմիածնի», Թիֆլիս, 1863, Ը., 230 էջ:

¹² «Դանիէլն առաջինները կոչում է «լրի», երկրորդները՝ «թերի». ամբողջականների մէջ թերիները շատ են, օրինակ՝ Հ^{մբ} 154, 158, 160, 162, 163, 185, բայց սրանք անլի շուտ վնասուած են, նրանց մասերը կորսուած են, որովհետեւ Դանիէլը թերի է համարում այնպիսի ձեռագրերը, որոնց մէջ իր իսկ՝ գրչի ցանկութեամբ գրուած են միայն որոշակի գրքեր, օրինակ՝ Գործք եւ Թուղթք առաքելոց կամ Մարգարէութիւն Եսայեայ եւ Թուղթք Պողոսի եւ այլ գրքեր՝ գրչի ընտրութեամբ» (ծնթ. Մ. Տ-Մ.-ի):

¹³ «Այս 349 միաւորների թուի մէջ չեն մտնում Հ. Խաչիկ վարդապետի հաւաքածուի՝ Հին եւ Նոր կտակարանների ձեռագրերը» (ծնթ.՝ Մ. Տ-Մ.-ի): Նկատի ունի Խաչիկ վրդ. Դադեանին, որի հաւաքածուների մասին մանրամասն տես Օ. Եզանեան, Մատենադարանի ձեռագրական հաւաքածուները, ՅԶՄՄ, Ա., էջ 74-78, 87, 111-114:

զատելն ընդունուած է՝ վերջինիս ամէն համարի կցելով Գ տառը՝ Գէորգ կաթողիկոսի անուան սկզբնատառը, որը դրել է նոր հաւաքածուի հիմքը: 349 թիւը ցոյց է տալիս, թէ որքան մեծ է Աստուածաշնչի պահպանուած ձեռագրերի քանակը, բայց պէտք է իմանալ, որ նրանց մէջ ամենամեծ քանակը կազմում են Աւետարանները: Աստուածաշնչի ամբողջական ձեռագրերը 42ն են՝ նրանց մէջ հաշուելով որոշ պակասաւոր օրինակներ, թերիները՝ 74, Աւետարանները՝ 233¹⁴: Այս ձեռագրերով ամենեւին չի սպառուում Աստուածաշնչի բնագրի ամբողջ նիւթը: Մինչեւ այժմ գտնուած չէ հայկական Աստուածաշնչի՝ երկաթագիր գրչութեամբ գրուած որեւէ օրինակ, բայց այդպիսի բնագիր, թէկուզ եւ հատուածներով, կայ Ժ.-ԺԲ. դարերի Ճաշոցներում, ապա Սաղմոսարանները՝ Ժամագրքերի մէջ. աւետարանական ընթերցուածները Մաշտոցների մէջ, անկասկած, հարուստ քննական նիւթ են պարունակում բնագրի համար՝ չխօսելով արդէն ամենահին ձեռագրից աւելի հին ժամանակների հեղինակների բազմաթիւ քաղումների մասին: Ձեռագրերը եւ դասաւորում եմ ժամանակագրական կարգով՝ ուշադրութիւն չդարձնելով նրանց գտնուելու վայրի վրայ: Իմ ցանկի օգտագործման յարմարութեան համար, բացի ժամանակագրական կարգով համարակալումից, փակագծերում տալիս եմ գրադարանի ներկայ համարը եւ ամէն ձեռագրի անուանումը՝ լատինական տառերով, դրա համար օգտագործելով գրչի, տիրոջ կամ գտնուելու վայրի անուան սկզբնատառը՝ ըստ նրանց նշանակութեան»¹⁵:

Թուացեալ որոշ շեղումով՝ Աւետարանի ձեռագրերի խնդրի առիթով անհրաժեշտ ենք համարում ասել հետեւեալը. փորձով համոզուել ենք, որ Աստուածաշնչի կամ նրա գրքերի ու գրքախմբերի ձեռագիր օրինակների քննութեան ընթացքում Աւետարանի եւ Սաղմոսարանի առանձին գրքի տեսքով գրուած ձեռագրերի հարցերը պէտք է դիտարկել-քննել առանձին, որովհետեւ ամենօրեայ ծէսի մէջ գործածուելու հարկը երկու դէպ-

¹⁴ «Եւ հաղորդեցի Էջմիածնի մատենադարանի մասին մանրամասներ, որովհետեւ, ինչպէս ասում եւ, բոլոր գրքերի համար հրատարակուած ցուցակ չկայ. եւ որովհետեւ իմ աշխատանքի հիմքերը կազմում են նրա ձեռագրերը, այլ գրադարանների մասին համառոտ տեղեկութիւններ բերում եմ, երբ առիթ է լինում յիշատակել այդ գրադարանների օրինակները» (ծնթ. Մ. Տ-Մ.-ի):

¹⁵ ՊՍԳԹ, էջ 80-81: Պայմանանիշերը (տե՛ս ստորեւ՝ առաջին աղիւսակի երրորդ սիւնակը) սահմանել է այնպէս, որ հնարաւոր լինի նրանցով հեշտ գուշակել եւ մտապահել ձեռագրերն ու նրանց պահպանման տեղերը. Ե՝ նշանակում է «Երուսաղէմ» (ձեռագրի պահպանման տեղը), Մօ՝ «Մօրու» անապատ (գրչութեան վայրը), Օ՝ «Յովհաննէս Արքաեղբայր» (ստացողի անունը), Ան՝ Անաւարգա (կրկին՝ գրչութեան վայրը), ՄՆ՝ Մովսէս, Ներսէս (գրիչների անունները), Քո՝ Կոստանդնուպոլիս, ԼԲ՝ Ղազար Բաբերդացի եւ այլն:

քում էլ առաջացրել է ձեռագրերի այնպիսի մեծ քանակ, որ շատ բարդ եւ տարողունակ խնդիրներն ինչ-որ չափով կարող են յատակուել միայն այդ ձեռագրախմբերի առանձին քննութեամբ: Ասենք՝ ամբողջ աշխարհում պահպանուած Հայերէն մօտ 31.000 ձեռագրերի շարքում Աւետարանների քանակը երեւի գերազանցում է 5.000 թիւը, որ առանձին քննելու համար իսկ մի մարդու եւ մի կեանքի գործ չէ: Ուրեմն, այս երկուսի՝ Աւետարանի եւ Սաղմոսարանի վերաբերմամբ, առանձին ուսումնասիրելու հարկից բացի, հաւանաբար պէտք է անհրաժեշտ-պարտադիր լինի տարբերակուած վերաբերմունք ունենալը. մասնաւորապէս առկայ նիւթին որոշ չափով ծանօթ լինելով՝ կարծում ենք, որ Աւետարանի բնագրական խնդիրների համար կարելի է լիովին բաւարար համարել Թ.-ԺԲ. դարերի ձեռագրերի վրայ հիմնուելը, իսկ հետագայ դարերին վերաբերողներից ընտրել միայն հին կամ համբաւաւոր (աւանդոյթով Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթեւի կամ այլոց ինքնագրերից ընդօրինակուած) գաղափար օրինակներ ունեցած ձեռագրերը:

Դառնանք մեր բուն խնդրին. այսպիսով՝ աղիւսակներով, ըստ գրքի բաժինների՝ պատկերում ենք Մեսրոպ Տէր-Մովսիսեանի օգտագործած եւ յիշատակած ձեռագրերի ներկայ հաւաքածուները եւ համարները. վերջիններիս կողքին գրում ենք հետեւեալ ցուցիչ-համառօտումները՝

Ե - Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց մատենադարան.

Մ - Մաշտոցեան Մատենադարան (Երեւան).

Վ - Մխիթարեանց Վեներտիկի մատենադարան.

Վն - Մխիթարեանց Վիեննայի մատենադարան.

Վն. կյսրկն. - Վիեննայի կայսերական մատենադարան¹⁶:

¹⁶ Հայերէն ձեռագրերի հանրայայտ այս հաւաքածուների ձեռագրացուցակների համապատասխան հատորների եւ էջահամարների յիշատակումներով մեր շարադրանքը չենք ծանրաբեռնում, որովհետեւ առաւել քան համոզուած ենք, որ տեղեակ ընթերցողը մեր աղիւսակներում տեսած, օրինակ՝ «Ե 326» ձեռագրի նկարագրութիւնը, պէտք է փնտրի եւ հեշտութեամբ գտնի Նորայր արք. Պողարեանի կազմած՝ Երուսաղէմի Ս. Յակոբեանց մատենադարանի 11 հատորանոց ձեռագրացուցակում: Երբեմն, անհրաժեշտ պարզաբանումների թելադրանքով, յիշատակել ենք միայն ո՛չ շատ յայտնի հաւաքածուների ցուցակներ, առանձին դէպքերում մատնանշել ենք մեր խնդրոյ առարկայ ձեռագրերի յիշատակարանների՝ առկայ տասնհատորեակի մէջ տպագրուած լինելը:

1. «ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՁԻ 79 (=77)¹⁷
ՁԵՌԱԳԻՐ ՕՐԻՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ» (էջ 81-151)¹⁸

Հ ^ա Բ/Կ	Էջ գրքի	Պայմանանիշ	Ժամանակ	Էջմիածնի Հ ^ա Գրք	Այլ համար- ծրոներ	Արդի Հ ^ա
1	81-2	J ¹	1199	-	Երուսաղեմ	Ե 326
2	82-3	Mo	1253-5	148/154 ¹⁹		Մ 178
3	83-4	O ¹	1263	Գ1056		Մ 4243
4	84-5	J ²	1269	-	Երուսաղեմ	Ե 1925
5	85-92	O ²	1270	149/155		Մ 345
6	92	An. ²⁰	1285	-		Մ 5560
7	92	SK ¹	1285	-	Պրուսա, Ս. Ա ' ' ծածին	անյայտ ²¹
8	92-103	MA	1272-88	924/944		Մ 1500 ²²
9	103-8	St ¹	1292	150/156		Մ 179
10	108-17	MN	1292	147/153		Մ 177
11	117-9	H	1295	151/157		Մ 180
12	119	St ²	1297		Եդոկիա, Ս. Գեորգ	անյայտ ²³
13	119	ME.	1298		ՄՊր, Արլ.	Հայ. C-29 ²⁴
14	120	SK ²	1303	153/159		Մ 182

¹⁷ Յիշենք, որ գրքում այս ցանկի ձեռագրերը համարակալուած են 1-79, սակայն քանի որ հեղինակը թիրիմացաբար երկու ձեռագիր՝ Մ 2627 եւ Վ 1006/6 կրկնել է երկուական անգամ, Մ 2627 երկու դէպքում էլ գրել ենք որպէս 19րդ համար (երկրորդ անգամը՝ 30րդից յետոյ), իսկ Վ 1006/6ը կրկին անգամ ստացել է նոյն՝ 77րդ համարը:

¹⁸ Խորագիրն ըստ ցանկի է (էջ Է.). շարադրանքի մէջ հետեւեալն է՝ «Աստուածաշնչի հայկական ձեռագրերը» (էջ 76):

¹⁹ Այսպիսի կոտորակային համարների համարիչը Դանիէլին («Կարենեան») է, յայտարարելով «Էջմիածնի հին», «Գ» գրով համարները «Գեորգեան» հաւաքածուին են:

²⁰ Որպէս «ի յաստուածապահ դղեակս Անարգաբա» գրուած՝ Կտուց անապատի ձեռագիր գիտէ հետեւեալից՝ **Գարեգին վրդ. Զարբհանալեան**, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, դար Դ.-ԺԳ., Վենետիկ, 1889, էջ 156 (այսուհետեւ յիշատակելու ենք՝ «**Զարբ.**, ՀԹՆ» ձեռով):

²¹ Կրկին՝ գիտէ **Զարբ.**, ՀԹՆ, էջ 156ից. այս ձեռագրին վերաբերող բաւական մեծ գրականութիւն կայ:

²² Գրչութեան թուականը ճշգրտուած է՝ ՉԼԲ. - 1283 թուական. տնն «Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», ԺԳ. դար, կազմ.՝ Ա. Մաթեոսեան, Երեւան, 1984, էջ 531-3 (այսուհետեւ՝ «ԺԳ. դ.ի յիշ-ք»):

²³ Նորից՝ գիտէ **Զարբ.**, ՀԹՆ, էջ 156ից. տնն նաեւ «ԺԳ. դ.ի յիշ-ք», Հ^ա 641՝ էջ 804:

²⁴ Հայերէն տասներեք այլ ձեռագրերի հետ միասին պատկանել է իշխան Ն. Ա. Մուրաւեովին, նրանից անցել է իր փեսայ Չերտկովին. այժմ Ռուսաստանի ԳԱ Արեւելեան ձեռագրերի հիմնարկում է՝ C-29 համարի ներքոյ. համառօտ նկարագրութիւնը տնն **Կ. Юзбашян**, Армянские рукописи в Петербургских собраниях: Каталог, Православный Палестинский сборник, Выпуск 104, С.-Петербург, 2005, էջ 189, յիշատակարանները՝ էջ 311-312:

15	120-1	K	1308	154/160		Մ 183
16	121	KJ	1317	175/181		Մ 353
17	121-2	Ez	1318	176/182		Մ 206
18	122	SK ³	1319	-	Վենետիկի	Վ 1508/1 ²⁵
19	122-3	Ja	1340	Գ359		Մ 2627 ²⁶
20	123-4	V ²	1332	-		Վ 1007/12
21	124-5	V ³	1341	-		Վ 935/8
22	125-6	AS	1366	Գ357		Մ 2705
23	126	WM ¹	1368	-		Վն 55
24	126-7	Su	1371	174/180		Մ 352
25	127	Ch.	1384	Դադեան 1		Մ 4113 ²⁷
26	128-9	Sch.	1360	155/161		Մ 346
27	129	Min.	1395	-	Կ.Պոլիս, Վ. Վ. Տեր-Մի-նասեան	անյայտ ²⁸
28	129-30	DJ ¹	1400	156/162		Մ 184
29	130	V ⁴	1418-22	-		Վ 280
30	130	JT	1422	178/184		Մ 207
19	130-1	Wa	1425	[Գ359]	Վան ²⁹	Մ 2627
31	131	Mar.	1492	-	Մարմաշէն	անյայտ ³⁰
32	131	Wk.	1608	-	Վիեննա. կյարկն	Cod. Arm. 11
33	131-2	Kon ¹ .	1611	158/164		Մ 186

²⁵ Վենետիկի Մխիթարեանց ձեռագրերի կոտորակային համարների համարիչը գոյքահամարն է, յայտարարը՝ ձեռագրացուցակի համարը:

²⁶ Այս՝ Գ359ը, բնականաբար, անձամբ տեսել եմ գրչության ԶԶԷ.-1338 թուականը (87բ-8ա) նկատած չլինելով՝ ներկայացրել է որպես 1327-1340 թթ. գրուած՝ թուագրելով ձեռագրի ստացող Յակոբ Բ. Անապրզեցի կաթողիկոսի (1327-1341 թթ.) տարիներով:

²⁷ Տե՛ս Զ. Թօփեան, Ցուցակ ձեռագրաց Դադեան Խաչիկ վարդապետի, ժողովածու 1878-1898, մասն Ա., Վաղարշապատ, 1898, էջ 3-5:

²⁸ Գիտել՝ «Նոտարք հայոց. Հաւաքեալ եւ ի յոյս ածեալ ձեռամբ Ղեւոնդ վարդապետի Փիրղալէմեան Տոսքեցոյ, Վարազայ վանուց վանականի», Կ. Պոլիս, [1888], էջ 6-7ի յիշատակարանից, որի ծանոթութիւնն է՝ «1880, առ Վահան վ. Տ. Մինասեան»:

²⁹ Նոյն Ղ. վրդ. Փիրղալէմեանն այս ձեռագիրը տեսել է «1866. յուլիս 20. ի Վան, Առաջնորդարան, առ հանգուցեալ Կղեմէս վարդապետ Զովսեան Կ. Պոլսեցի» եւ ընդօրինակել հետագայ՝ 1425 թ. ստացող Աւետիք Դարանաղցու յիշատակարանը (էջ 541բ). տեն «Նոտարք հայոց...», էջ 79-80 (այստեղից առել է՝ «ԺԵ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», մասն Ա. (1401-1450 թթ.), կազմ.՝ Լ. Խաչիկեան, Երեւան, 1955, էջ 343-4, Հ^ր 362): Իսկ 1873ին տիկ. Եւգինէն ձեռագիրը գնել եւ նուիրել է իր եղբորը՝ Գեորգ Դ. կաթողիկոսին (Հ^ր 43), ապա եւ մտել է Գեորգեան հաւաքածու՝ Հ^ր 359: Մ. Տեր-Մովսիսեանը գրչութեան եւ հետագայ յիշատակարաններով ձեռագրի նոյնականութիւնը չի նկատել:

³⁰ Այս ձեռագրի մասին գիտենք միայն մեր հեղինակից եւ հիմնականում այս գրքից. ՊԱԳԹ, էջ 131՝ «Mar. N° 32. 1492 (ձեռ. Մարմաշէնի վանքում) անցեալ 1901ի ամռանը Բաքուում բժ. Յովհաննիսեանն ինձ ցոյց տուեց իր ուղեգրական նոթերը, նրանց մէջ եւ գտայ համառօտ տեղեկութիւն մի ձեռագիր Աստուածաշնչի մասին, որ գտնուում է Կարսի մարզի Մարմաշէն վանքում: Այն գրուած է Յովհաննիսեանի ձեռքով, Միրանշահի համար, թղթի վրայ, 1492 թուականին, «յօրինակէն Սանահնոյ»): Գրեթէ նոյնն է նաեւ Աստուածաշունչ ձեռագրերի անտիպ ցուցակում՝ Մ. Տեր-Մովսիսեան, Ընդհանուր ցուցակ հայերէն ձեռագրաց, Աստուածաշունչ, էջ 200-201. «ՄԷ. ՋեմԱ. - 1492. Մարմաշէն,

34	132	J ³	1615	-		Ե 2558
35	132-5	LB ¹	1616-9	173/179		Մ 351
36	135	J ⁴	1622-32	-		Ե 2559
37	135	J ⁵	1624	-		Ե 2560
38	135	Kon ²	1625	-	Վատիկան	Cod. Vat. Arm. 1 ³¹
39	136	Tig ¹	1635	-		Ե 1127
40	136	G.	1635	Գ360		Մ 2628
41	136	Tig ²	1640	159/165		Մ 187
42	136-7	Kon ³	1641	160/166		Մ 188
43	137	Kon ⁴	1641	Գ17		Մ 2669
44	137-8	Dj ¹	1648	Գ18		Մ 2587
45	138	Dj ²	1648	-		Վ 623/3
46	138	Dj ³	1650	161/167		Մ 189
47	138	Dj ⁴	1550	171/177		Մ 204
48	139	Dj ⁵	1651	-	Նոր Զուղա	15/1 ³²
49	139	Dj ⁶	1654-8	164/170		Մ 200
50	139-40	LB ²	1655-7	-		Վ 229/4
51	140	LB ³	1656	-		Վ 1182/7
52	140	Dj ⁷	1657	163/169		Մ 347
53	140	Var.	1659	-/185		Մ 190
54	140-2	Dj ⁸	1660 ³³	166/172		Մ 201
55	142	E ¹	1661 ³⁴	165/171		Մ 348
56	142	Kon ⁵	1661 ³⁵	-		Ե 2561
57	142-3	Dj ⁹	1663	162/168		Մ 191
58	143	Kon ⁶	1666 ³⁶	167/173		Մ 202
59	143-4	Kf.	1668	Գ358		Մ 2706
60	144	Tig ³	1683	168/174		Մ 203
61	144-5	E ²	1686	169/175		Մ 349
62	145 ³⁷	E ³	1700	170/176		Մ 350
63	145	L ¹	ԺԳ. դ.	-	Լևոն, Լմբթ.	1209 ³⁸

Ղանկինա. ՊՍԳԹ, էջ 131. Տեղեկատու բժիշկ Յովհաննիսեան, Գրիչ Յովհաննէս ի վանացն Թանատեաց, ի գիրս որ կոչի Գաւառ, ստացող Միրանշահ, արտագրեալ յօրինակէն Սանահնոյ»:

³¹ Տե՛ս “Codices Armeni bybliothecae Vaticanae Borgiani, Vaticani, Barberiniani, Chisiani. Schedis Frederici Cornwallis Conybeare adhibitis recensuit Eugenius Tisserant, Bybliothecae Vaticanae scriptor”, Romae, Typis Poluglottis Vaticanis, MCMXXVII (1927), էջ 197-201 (այսուհետև՝ «Վատիկանի ցուցակ»):

³² Գրչութեան թուականը ճշտուած է՝ ՌՃԺԱ.-1662 թ.: Նոր Զուղայի համարները եւս գրել ենք գոյքահամար/ցուցակի համար կարգով:

³³ Վրիպակով տպուած է՝ 1610 թ.:

³⁴ Ճշգրտուած է՝ 1654-1661 թթ.:

³⁵ Ճշգրտուած է՝ 1654-1670 թթ.:

³⁶ Ճշգրտուած է՝ 1651-1666 թթ.:

³⁷ Համարը վրիպմամբ տպուած է՝ «62»:

³⁸ Նկարագրութիւնը տես “A catalogue of the Armenian manuscripts in the British Library, Acquired since the year 1913, and of collections in other libraries in the United Kingdom”, by

64	145-6	V ¹ .	ԺԳ-ԺԴ.	-	Վենետիկ	841/5
65	146	WM ² .	ԺԳ-ԺԴ.	-	Վիեննա	71
66	146	Ach.	ԺԳ-ԺԴ.	-	Ախացխա. Ս. Փրկիչ եկդ. ³⁹	Մ 7623
67	146-7	JL.	ԺԵ-ԺԶ.	177/183		Մ 354
68	147	Sis.	ԺԶ. դ.	-	Սսի [16]	անյայտ
69	147	Sis.	ԺԶ. դ.	-	Սսի [17]	անյայտ ⁴⁰
70	147	V ⁹ . ⁴¹	ԺԶ. դ.	-	Վենետիկ	Վ 1270/9
71	147-8	JM	ԺԷ. դ.	172/178		Մ 205
72	148-50	Ka.	ԺԷ. դ.	Գ16		Մ 2585
73	150	As	ԺԷ. դ.	Գ784		Մ 2732
74	150	Z.	ԺԷ. դ.	-	Լոնդոն, լրդ. Զուչե	Բրիտ. գր. Օր. 8833 ⁴²
75	150-1	L ² .	ԺԷ. դ.	-	Լոնդոն, Ածնչ. ընկ.	Հ ^մ 76 ⁴³
76	151	Dj ¹⁰ .	ԺԷ. դ.	-	Նոր Զուղա	Ն Զ 16/2
77	151	V ¹⁰ .		-	Վենետիկ	Վ 1006/6 ⁴⁴
77	151	V ¹¹	-	-	Վենետիկ	Վ 1006/6 ⁴⁵

Vrej Nerses Nersessian, vol. one, The British Library, London, 2012, էջ 93-94 (այսուհետև՝ «Անգլիայի ցուցակ», Բ.):

³⁹ Ձեռագիրը եղել է Ախացխայի Սուրբ Փրկիչ եկեղեցում (Ach.՝ Ախացխա). տե՛ս «Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երևցակայ եւ շրջակայից նորա», գրեց Մեսրոպը արք. Սմբատեանց. 1897-1904, Տփլիսի, 1904, էջ 315: Թուականը ճշգրտում է՝ ՌՃԴ. - 1655 թ.:

⁴⁰ Գիտել Վ. Լանգլուայից՝ «Կիլիկիայում՝ Սսում, հայոց կաթողիկոսարանում... Աստուածաշնչի երկու ձեռագիր... առաջինը «in 4^o», երկրորդը «in folio», երկուսն էլ գրում են թղթի վրայ, ըստ Լանգլուայի՝ ԺԶ. դ., թեկուզ այս թուագրման ճշտությունը կասկածելու հիմք ունենք»: V. Langlois, Voyage a Sis, Capitale de l'Arménie au moyen age, Journal Asiatique, Cinqüième Série, t. V, 1855, էջ 257-300 (էջ 290-297՝ «Catalogue des manuscrits»՝ նկարագրել է 145 ձեռագիր). էջ 291. «16. Bible; in 4^o, pap[lier], à deux colonnes, XVI^e siecle. 17. Bible, in-fol., pap[lier], à deux colonnes, XVI^e siecle»): Այս ցուցակի հայերեն թարգմանությամբ տես Մեսրոպ վրդ. Աշճեան, Սոյ կաթողիկոսարանին ձեռագրաց ցուցակը, «Հասկ», 1971/Դ.Ե., էջ 164-69 (այս ձեռագրերը՝ էջ 165):

⁴¹ Ձեռագրի վենետիկեան համարն է ՊՍԳԹ վրիպմամբ՝ «1366» է:

⁴² «Ձեռ. «Zouche»ի, «ԺԷ. դ.»». «Այս ձեռագրի մասին գրում է Կոնիբերը՝ տասներկու նահապետների անկանոնի մասին յօդուածում: Այն մասնաւոր սեփականութիւն է Լորդ Զուչեի, Լոնդոնում» (ծնթ. Մ. Տ-Մ.-ի): Այժմ՝ Բրիտանական գրադարանի Օր. 8833. տես «Անգլիայի ցուցակ», Բ., էջ 59-71. Հ^մ 1:

⁴³ «Այս Աստուածաշունչը պատկանում է Անգլիական աստուածաշնչական ընկերութեանը, Լոնդոն, նրա մասին յիշատակում է Կոնիբերը՝ Jew. Quarterly Rew. (1896, էջ 260) յօդուածում» (ծնթ. Մ. Տ-Մ.-ի): Այժմ՝ «The Brithish and Foreign Bible Societe», Հ^մ 76. տես «Անգլիայի ցուցակ», Բ., էջ 88-92. Հ^մ 3:

⁴⁴ «Գրում է մագաղաթի վրայ, 581 թերթ, 47ական տող (մեծ. 25x17), բոլորգիր, Յովհաննէս մալազ Կարկաւեցու համար: Ժամանակի մասին ոչինչ չգտայ ո՛չ Զօհրապի մօտ (Առաջաբան, էջ 6), ո՛չ «Բագմավէպ»ում» (1891, էջ 129-30), պէտք է որ այն գրում լինի Կիլիկիայում, իսկ ըստ բնագրի նման է Ոսկանի հրատարակութեան բնագրին: Ունի «ֆռանկ»ի համարները» (ծնթ. Մ. Տ-Մ.-ի):

⁴⁵ Յղում է՝ «ՀԹՆ, էջ 145», ապա՝ «Գրում է մագաղաթի վրայ, բոլորգիր, ժամանակի մասին վկայութիւններ չգտայ» (ծնթ. Մ. Տ-Մ.-ի): Սակայն սա եւ նախորդը նոյն ձեռագիրն

2. ԱՍՏՈՒԱԾԱՇՆՋԻ ՄԱՍՆԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԵՐ ԵՒ ԱԻԵՏԱՐԱՆՆԵՐ.
«Ա. Մասունք Հին եւ Նոր կտակարանների՝ 18 ձեռագիր» (էջ 152-4).

Հ ^ա ը/կ	Հ ^ա /էջ	Ժանկ	Էջմ./Գեորգ.	Այլ	Արդի Հ ^ա
78	1/152	1207	203		Մ 194
79	2/152	1269	191		Մ 142
80	3/152-3	1295	152/158		Մ 181
81	4/153	1315	189		Մ 192
82	5/153	1354		Բեռլին	Ms. Or. Minut. 287 ⁴⁶
83	6/153	1371	195		Մ 62
84	7/153	1379	188		Մ 159
85	8/153-4	1431	200		Մ 149
86	9/154	1628 ⁴⁷	196		Մ 146
87	10/154	1637	194		Մ 145
88	11/154	1667	Գ.994 ⁴⁸		Մ 3545
89	12/154	1703	210		Մ 77
90	13/154	1733	213		Մ 80
91	14/154	ԺԳ. դ.		Վատիկան	Cod. Vat. Arm. 3 ⁴⁹
92	15/154	ԺԵ. դ.	199		Մ 148
93	16/154	ԺԷ. դ.	223		Մ 229
94	17/154	ԺԶ. դ.	Գ1020		Մ 3604
95	18/154	ԺԶ. դ.	Գ342 ⁵⁰		Մ 2397

էջ 155-158՝ «Բ. ՀԻՆ՝⁵¹ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՈՐՈՇԱԿԻ ԳՐՔԵՐ ՈՒՆԵՑՈՂ
ՁԵՌԱԳՐԵՐ՝ 21 միաւոր».

Հ ^ա ը/կ	Էջ/Հ ^ա	Ժանկ	Էջմ./Գեորգ.		Արդի Հ ^ա
96	1/155	1256	222		Մ 287
97	2/155	1271	186		Մ 199
98	3/155	1312	224		Մ 231
99	4/156-7	1299	190		Մ 193

են. այսինքն՝ Մեսրոպ Մազիստրոսի «V¹⁰» եւ «V¹¹» պայմանանիշերը վերաբերում են միեւնոյն՝ մէկ ձեռագրի:

⁴⁶ Տե՛ս “Die handschriften-Verzeichnisse der Königlischen Bibliothek zu Berlin”, Zehnter Band, Verzeichniss der armenischen Handschriften vion Dr. N. Karamianz, Berlin, 1888, էջ 3-4, Հ^ա 5:

⁴⁷ Թուականը ճշտուած է՝ ՌՀԶ.-1627 թ.:

⁴⁸ Գեորգեան համարը վրիպմամբ ստուած է 944, որ արդի 2440ն է, մինչ նկարագրուած ձեռագիրը Գեորգեան 994ն է, որ արդի 3545ն է, եւ որի ճշգրիտ թուականն է՝ ՌՀԺԶ.-ՌՀԺԷ.-1667-1668 թթ.:

⁴⁹ Տե՛ս «Վատիկանի ցուցակ», էջ 205-221:

⁵⁰ Գրքում համարը վրիպմամբ կամ թուերի դրափոխութեամբ 432 է:

⁵¹ ՊՍԳԹ, էջ 155՝ վրիպմամբ ստուած «Նոր կտակարանի»՝ «H. Завета», իսկ ցանկում (էջ Է.) ճիշտ է՝ «B. Завета»:

100	5/157	1317	209		Մ 76
101	6/157	1357			Վնն. 274
102	7/157	ԺԲ. դ.		Մնսր. վրժր.	Մ 7753 ⁵²
103	8/157	1361	198		Մ 73
104	9/157	1447	187		Մ 141
105	10/157	1630	212		Մ 79
106	11/157	1631	207		Մ 75
107	12/158	1647	205		Մ 74
108	13/158	1696		Վիեննա	Վն 319 ⁵³
109	14/158	ԺԳ. դ.	163		Մ 185
110	15/158	ԺԵ. դ.	216		Մ 156
111	16/158	ԺԶ. դ.	220		Մ 230
112	17/158	ԺԷ. դ.	219		Մ 271
113	18/158	ԺԸ. դ.	214		Մ 81
114	19/158	ԺԹ. դ.	225		Մ 232
115	20/158	ԺԺ. դ.	193		Մ 174
116	21/158	ԺԻ. դ.	Գ144		Մ 2856

Էջ 159-167՝ «Գ. ԱԻԵՏԱՐԱՆԻ ՁԵՌԱԳՐԵՐ՝ 38 (=36)⁵⁴ միաւոր».

Հ ^ա ք/կ	Հ ^ա /Էջ	Ժմնկ	Դան.	Էջմ/Գ-էորգ	Այլ	Արդի Հ ^ա
